

**ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
ԱՊԱՅՈՒՅՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ***

ՀՏԴ 341.3

DOI: 10.52063/25792652-2024.4.23-12

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
artur.ghambaryan@gmail.com
ORCID: 0000-0002-6322-4664

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքի առանձնահատկությունները:

Նշված նպատակին հասնելու համար կատարված ուսումնասիրության խնդիրներն են.

1. ցույց տալ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքի և ապացույցների անթույլատրելիության հարաբերակցությունը,
2. ուսումնասիրել.
 - 2.1. ապացույցի փոխարինած լինելու կամ դրա հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը
 - 2.2. հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձից ստացված տվյալները,
 - 2.3. պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունքից դատարանում հրաժարվելը՝ որպես ապացույցի օգտագործման արգելքի դեպքերին վերաբերող նորմերի բովանդակություն:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակի կողմից կիրառվել են հետազոտման ընդհանուր մեթոդները՝ դիալեկտիկական, սինթեզետիկ, պատկաման և տրամաբանական, անալիզի և սինթեզի, ֆորմալ-դոգմատիկ մեթոդաբանությունը, և, մասամբ՝ իրավահամեմատական մեթոդը:

Հեղինակի հիմնական եզրահանգումներն են՝

1. օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով իրավաբանորեն անհնարին է համարել օրենքով սահմանված կարգով ձեռք բերված համապատասխան ապացույցների օգտագործումը, քանի որ, ամենայն հավանականությամբ, հիմք է ընդունել այն ենթադրու-

* Հոդվածը ներկայացվել է 07.11.2024թ., գրախոսվել՝ 28.11.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.12.2024թ.:

թյունը, որ նկարագրված երեք իրավիճակներում ապացույցները հավաստի չեն (ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը).

2. **հիշատակված հոդվածի տեքստային ձևակերպումը թույլ է տալիս այն կիրառել նաև այն դեպքերում, երբ տեղեկության կրողը մարդն է, օրինակ՝ մարդուն այլ մարդով փոխարինելու միջոցով նրա կրած տվյալները փոխարինելու կամ դրանց հատկանիշները փոփոխելու դեպքերում:**

Հիմնաբաներ՝ ապացույց, փաստական տվյալի անթույլատրելիություն, ապացույցի ոչ հավաստիության կանխավարկած, ապացույցի օգտագործման արգելք, անթույլատրելիության և օգտագործման արգելքի տարբերություն, ապացույցի թույլատրելիության և հավաստիության հատկանիշ, պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունք:

Ընդհանուր դրույթներ

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի կարգավորման առարկան լայն է. այն սահմանում է ոչ միայն օրենքի էական խախտմամբ ստացված տվյալներն անթույլատրելի ճանաչելու նյութական կանոնները և վարույթային կարգը, այլ նաև օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու արգելքները: Օրինակ՝ թիվ ԵԴ1/0442/01/23 գործով պաշտպանը միջևորդել է մեղադրյալ Հ. Խ.-ի՝ որպես ձերբակալվածի հարցաքննության արձանագրությունը (ցուցմունքը) ճանաչել անթույլատրելի, քանի որ այն տրվել է պաշտպանի բացակայությամբ (Դատական գործ N: ԵԴ1/0442/01/23) : Նշված գործով դատավոր Ջ. Հայրապետյանը, ուղղելով փաստաբանին, իրավացիորեն նշել է, որ այս պարագայում պետք է քննարկել ոչ թե ապացույցի թույլատրելիության մասին նորմերի, այլ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու արգելքի կիրառության հարցը (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մաս):

Օրենքով սահմանված է օրինական ճանապարհով ստացված տվյալները՝ որպես ապացույցներ օգտագործելու երեք արգելք: Այսպես՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե՝

1) առկա է դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկած.

2) դրանք ստացվել են այն անձից, որը հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները.

3) մեղադրյալը դատարանում հրաժարվել է պաշտպանի բացակայությամբ իր տված ցուցմունքներից (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր):

Օրենսդիրն իրավաբանորեն անհնարին է համարել այս ապացույցների օգտագործումը, քանի որ, ամենայն հավանականությամբ, հիմք է ընդունել այն ենթադրությունը, որ նկարագրված երեք իրավիճակներում ապացույցները հավաստի չեն (ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը): Օրենսդիրը, ըստ էության, կասկածի տակ է դրել այս իրավիճակներում հայտնված ապացույցների հավաստիությունը: Ինչպես նշվեց, եթե առկա է տվյալը (տվյալի կրիչը կամ ապացույցը) փոխարինած լինելու ողջամիտ կասկած, ապա ենթադրվում է, որ այդ ապացույցը հավաստի չէ, կամ եթե տվյալները ստացվել են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից, ով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները, ապա ենթադրվում է, որ նման անձից ստացված տվյալները հավաստի չեն, կամ եթե մեղադրյալը դատարանում

հրաժարվել է ցուցմունքից, որը նախաքննության ընթացքում տվել է պաշտպանի բացակայությամբ, ապա ենթադրվում է, որ այդ ցուցմունքը հավաստի չէ:

Ապացույցի անթույլատրելիության և օգտագործման արգելքի տարբերությունները

Վերոգրյալից պարզ դարձավ, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածում ամրագրված են տվյալների (ապացույցների) օգտագործման անհնարինության վերաբերյալ երկու խումբ նորմեր. առաջին խումբը *օրենքի էական խախտմամբ* ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության մասին նորմերն են, իսկ երկրորդը՝ *օրենքով սահմանված կարգով* ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու սահմանափակման (արգելման) նորմերը:

Տվյալներն (ապացույցներն) անթույլատրելի են, եթե ձեռք են բերվել օրենքի էական խախտմամբ, իսկ ապացույցի օգտագործման արգելքի դեպքում թեև ապացույցը հավաքելիս օրենքի խախտում թույլ չի տրվել, սակայն Օրենսդիրը, հիմք ընդունելով այդ իրավիճակում հայտնված ապացույցների ոչ հավաստիության կանխավարկածը, արգելել է թույլատրելի (օրինական ճանապարհով ստացված) ապացույցների օգտագործումը:

Ի տարբերություն ապացույցի անթույլատրելիության՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցի օգտագործման արգելքի դեպքում «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնը և ապացույցի թույլատրելիության անհամաչափության (ասիմետրիայի) կանոնը կիրառելի չեն, քանի որ վերջին երկու կանոնները կապված են օրենքի էական խախտմամբ ստացված տվյալների հետ: Օրինակ՝ ի տարբերություն «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնի, օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալների օգտագործումը թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով արգելվում է, սակայն օրենքը չի արգելում այդ տվյալների (օրինական ճանապարհով ստացված) հիման վրա ձեռք բերված այլ ապացույցների օգտագործումը: Օրինակ՝ քննիչը հոգեկան խնդիրներ ունեցող անձի ցուցմունքի հիման վրա կատարել է խուզարկություն և ձեռք է բերել իրեղեն ապացույցներ: Այս պարագայում հոգեկան խնդիր ունեցող այն անձի ցուցմունքը, որը առողջական խնդիր ունենալու պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները, իրավաբանորեն չի կարող օգտագործվել, սակայն նրա ցուցմունքի հիման վրա կատարված խուզարկության արդյունքում ձեռք բերված ապացույցները կարող են օգտագործվել որպես ապացույց:

Ապացույցների օգտագործման արգելքները

Ապացույցի փոխարինած լինելու կամ դրա հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը

Օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե առկա է դրանք փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկած (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետ): Այս նորմի հիմքում ընկած է ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը, քանի որ Օրենսդիրը, տվյալը (տվյալի կրիչը կամ ապացույցը) փոխարինած (հատկանիշները փոփոխած) լինելու ողջամիտ կասկածից ելնելով, ենթադրում է, որ այդ ապացույցը հավաստի չէ:

Այս նորմում խոսք է գնում երկու տարբեր իրավիճակների մասին. առաջին իրավիճակը տվյալի կրիչները (օրինակ՝ տեղեկություններ բովանդակող առարկաները և փաստաղբերը) այլ կրիչներով *փոխարինելու* ողջամիտ կասկածի մասին է:

Առարկաները և փաստաթղթերն այլ կրիչներով փոխարինելու դեպքում փոխարինվում են նաև այդ կրիչների բովանդակած տվյալները:

Երկրորդ իրավիճակը տվյալի կրիչի հատկանիշները *փոփոխելու* ողջամիտ կասկածի մասին է, որի պարագայում, թեև կրիչներն այլ կրիչներով չեն փոխարինվել, սակայն փոփոխության են ենթարկվել այդ կրիչի հատկանիշները, որի արդյունքում փոփոխվել են նաև տվյալները:

Տվյալները փոխարինելու կամ դրա հատկանիշները փոփոխելու ռիսկերից խուսափելու համար կարևոր նշանակություն ունի, հատկապես, առարկաները կամ փաստաթղթերը փաթեթավորելու, կնքելու, պահպանելու, տեղափոխելու վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված նորմերի պահպանումը:

Տվյալները փոխարինած լինելու կամ դրանց հատկանիշները փոփոխած լինելու ողջամիտ կասկածը կարելի է փարատել, իսկ ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը կարելի է հերքել, օրինակ, այդ ապացույցը ձեռք բերած կամ կազմած անձին դատարանում հարցաքննելու եղանակով (ՀՀ քր. դատ. օր.-ի 311-րդ հոդվածի 4-րդ մաս):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ տվյալները փոխարինելու կամ դրանց հատկանիշները փոփոխելն իրականացվում է այդ տվյալների կրիչների փոխարինման կամ փոփոխման միջոցով: Որպես տեղեկությունների կրիչ՝ առաջին հերթին, հանդիսանում են առարկաները և փաստաթղթերը, սակայն նկատի ունենալով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում չի նշվում տեղեկության կրիչի տեսակի կամ բնույթի մասին, ուստի՝ այս հոդվածի տեքստային ձևակերպումը թույլ է տալիս այն կիրառել նաև այն դեպքերում, երբ տեղեկության կրողը մարդն է, օրինակ՝ մարդուն այլ մարդով փոխարինելու միջոցով նրա կրած տվյալները փոխարինելու կամ մարդու կրած տվյալների հատկանիշները փոփոխելու դեպքերում: Օրինակ՝ ողջամիտ կասկած կա, որ իրական վկայի փոխարեն ցուցմունք է տվել պլաստիկ վիրահատության միջոցով նրան էապես նմանեցված այլ անձ: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ բացակայում են ցուցմունքները փոխելու նպատակով մեղադրյալի կամ վկայի նկատմամբ հարկադրանք կիրառելու մասին փաստեր, սակայն իրավիճակն առաջացնում է ողջամիտ կասկած այն մասին, որ համապատասխան խոցելի իրավիճակում հայտնված անձի հաղորդած տվյալները փոփոխվել են, օրինակ՝ ձերբակալված անձը, որի վրա առկա են վնասվածքներ, ցուցմունք է տվել պաշտպանի բացակայությամբ, և ցուցմունք տալուց անմիջապես հետո նրան ազատ են արձակել: Այս իրավիճակը թույլ է տալիս ենթադրել, որ բարձր է հավանականությունը, որ նման իրավիճակում անձի հաղորդած տվյալները ենթարկվել են փոփոխության:

Այս հարցում հետաքրքրական է թիվ ԼԴ2/0062/01/18 գործով դատարանների որոշումները, որոնք եթե կայացվեին 2021թ. ՀՀ քր. դատ. օր.-ի գործողության պայմաններում, ապա դատարանների համար առավել հեշտ կլինեք տարբերակել ապացույցի թույլատրելիության և հավաստիության հատկանիշները: Նշված գործով բացակայել է անձից խոստովանական ցուցմունքները բռնությամբ կամ սպառնալիքով կորզելու որևէ փաստ, սակայն այդ խոստովանական ցուցմունքները ստացվել են այնպիսի պայմաններում, որոնք այդ ցուցմունքների պատշաճության վերաբերյալ հարուցում էին ողջամիտ կասկածներ, մասնավորապես՝ անձը գտնվել է անազատության մեջ, նրա հետ անազատության պայմաններում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից պարբերաբար անցկացվել են «օպերատիվ հարցազրույցներ», որից հետո անձը տվել է խոստովանական ցուցմունք: Այդ ընթացքում բացակայել է պաշտպանը, խոստովանական ցուցմունքներ տալու նախաձեռնությամբ հանդես է եկել անձը՝ վարույթն իրականացնող մարմինն այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով, իրեն մեղավոր ճանաչելուց և խոստովանական ցուցմունք տալուց անմիջապես հետո անձն արգելանքից ազատ է արձակվել:

Նշված գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փաստել է, որ նշված խոստովանական ցուցմունքների անթույլատրելիության մասին բողոքաբերը վերաքննիչ բողոքում չի նշել այնպիսի արձանագրված փաստական տվյալներ, որոնք հնարավորություն կտային հաստատված համարելու, որ անձը նախաքննական ցուցմունքները տվել է հարկադրանքի կամ ապօրինի ազդեցության արդյունքում: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշված գործով 12.02.2021թ. որոշմամբ արձանագրել է. «Վերը նշված հանգամանքները ողջամտորեն կասկածի տակ են դնում անձի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքների թույլատրելիությունը, ապա նաև **արժանահավատությունը** (ընդգծումը՝ հեղ.): Մասնավորապես, սույն գործով տեղի ունեցած վերոնշյալ հանգամանքների ժամանակագրական հաջորդականությունը, անկողմակալ դիտորդի տեսանկյունից ստվերում է անձի՝ նախաքննական խոստովանական ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը: Նման պայմաններում, ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս, մինչ անձի նախաքննական խոստովանական ցուցմունքները՝ որպես վերջինիս մեղքը հիմնավորող փաստական տվյալներ դիտարկելը պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանացնելին դրանք ձեռքբերելուն նախորդող և հաջորդող հանգամանքների համակցությունը. դա հնարավորություն կտար պատշաճ երաշխավորելու վարույթի արդարացիությունը: Այս համատեքստում ստորադաս դատարանները պետք է ձեռնարկելին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն, այդ թվում՝ համապատասխան այցելությունները կատարած ոստիկաններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև ձերբակալվածների պահման վայրի աշխատակիցներին հարցաքննելու և անձի նախաքննական ցուցմունքների ձեռքբերման պայմանները ստուգելու ուղղությամբ» (Դատական գործ N: ԼԴ2/0062/01/18):

Ինչպես նկատում ենք, ՀՀ վճռաբեկ դատարանը որոշման մեջ անդրադարձել է ապացույցի թույլատրելիությանն այն պարագայում, երբ անձի նկատմամբ բռնություն գործադրելու մասին որևէ ուղղակի կամ անուղղակի փաստ չի եղել: Եթե այս դատական որոշումը կայացնելու պահին գործեր ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, ապա դատարանը հնարավորություն կունենար նշված նորմի հիման վրա արգելելու ապացույցի օգտագործումը, քանի որ ստեղծված իրավիճակը, իրավամբ, առաջացնում է ողջամիտ կասկած, որ խոստովանական ցուցմունք տված անձի կրած տվյալների հատկանիշները փոփոխվել են:

Հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձից ստացված տվյալները

Օրենքով սահմանված կարգով ձեռք բերված տվյալները չեն կարող որպես ապացույց օգտագործվել, եթե դրանք ստացվել են այն անձից, որը հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետ):

Նախ՝ այս նորմից չի կարելի բխեցնել, որ օրենքով արգելվում է հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձանց մասնակցությամբ ապացուցողական գործողություններ կատարել: Եթե օրենքով նշված անձանց մասնակցությամբ գործողությունների կատարումն արգելվեր, ապա պետք է խոսվեր ոչ թե օրենքով սահմանված կարգով ստացված տվյալների օգտագործման սահմանափակման մասին, այլ ապացույցի անթույլատրելիության մասին: Ավելին՝ օրենքով նախատեսված են հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի հարցաքննությանը վերաբերող հատուկ նորմեր: Օրինակ՝ հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի հարցաքննությունը չի կարող տևել 2 ժամից ավել (ՀՀ քր. դատ. օր.-ի 217-րդ հոդվածի 3-րդ մաս):

Երկրորդ՝ այս արգելքը կարող է կիրառվել երկու պայմանի գոյության դեպքում՝ 1) անձի մոտ առկա է հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր, 2) առողջական այդ խնդիրների պատճառով անձը գրկված է վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու ունակությունից: Վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները ճիշտ ընկալելու, հիշելու կամ վերարտադրելու՝ վկայի կամ տուժողի ունակ չլինելը հաստատվում է դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությամբ (ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մաս):

Երրորդ՝ քննարկվող նորմը վերաբերում է հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունեցող անձից ստացված այնպիսի տվյալների օգտագործման արգելքին, որոնց կրողն անմիջապես այն անձն է, ով այս առողջական խնդիրների պատճառով ունակ չէ ճիշտ ընկալելու, հիշելու կամ վերարտադրելու այդ տվյալները: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված, որ նման անձից ստացված տվյալների օգտագործումն արգելվել է, քանի որ դրանց հավաստիությունը կախված է առողջության խնդիր ունեցող անձի ընկալման, վերարտադրման կամ հիշելու ունակությունից: Օրինակ՝ ճանաչման ժամանակ ճանաչողի փոխանցած տվյալները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե հաստատվի, որ նա մտավոր խնդրի պատճառով կորցրել է հիշելու ունակությունը: Այս պարագայում ճանաչման ենթակա հանգամանքների մասին տվյալների կրողն առողջության խնդիր ունեցող անձն է:

Եթե առողջության խնդիր ունեցող անձը ներկայացրել է, օրինակ, որևէ նյութական կրիչ (օրինակ՝ առարկա), ապա քննարկվող նորմն ինքնին չի արգելում այդ կրիչում արտացոլված տվյալների օգտագործումը, քանի որ այդ տվյալները կրողը ոչ թե առողջական խնդիր ունեցող անձն է, այլ՝ այդ անձի ներկայացրած առարկան: Այդ կրիչում արտացոլված տվյալների գնահատականը կախված չէ այն ներկայացրած անձի՝ որևէ հանգամանք ընկալելու ունակությունից: Այլ հարց է, որ առողջական խնդիր ունեցող անձի հայտնած տվյալները՝ թե ինչ հանգամանքներում (ե՞րբ, որտե՞ղ, ո՞ւմից) է ձեռք բերել այդ նյութական կրիչը, չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունքից դատարանում հրաժարվելը

Պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից (ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մաս): Նույն օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Մինչդատական վարույթում մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող հրապարակվել, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ, և մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից»:

ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մասը փոխառվել է հետխորհրդային պետությունների քրեական դատավարության օրենսգրքերից, մասնավորապես՝ 2001թ. ընդունված ՌԴ քր. դատ. օր.-ից, որի 75-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անթույլատրելի է մեղադրյալի՝ մինչդատական վարույթի ընթացքում պաշտպանի բացակայությամբ տված ցուցմունքը, որից նա դատարանում հրաժարվել է¹: «Սալոուզն ընդդեմ Թուրքիայի» գործով Եվրոպական դատարանի մեծ պալատը ևս նշել է. «Արդար դատաքննության իրավունքի բավարար «գործնականությունն ու

¹ Նույնական նորմ մինչ այդ նախատեսված էր նաև 1999 թ. ընդունված Ղրղզստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 81-րդ հոդվածի 4-րդ մասում: Այս նորմի հետագա փոփոխության համեմատական վերլուծության մասին տե՛ս Кылбаев, Аслан. «Уголовно-процессуальный кодекс Кыргызской Республики 2017 года: новеллы. Учебно-практическое пособие.» Бишкек, 2018. – 30 с.

գործունեությունն» ապահովելու համար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը հիմնականում պահանջում է, որ փաստաբանի հասանելիությունն ապահովվի ոստիկանության կողմից կասկածյալի առաջին հարցաքննության պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ յուրաքանչյուր առանձին գործի հատուկ հանգամանքները հնարավորություն են տալիս հիմնավոր կերպով սահմանափակելու այդ իրավունքը: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ հատուկ հանգամանքները կարող են արդարացիորեն թույլ տալ մերժել փաստաբանի ծառայությունների ապահովումը, սակայն նման սահմանափակումները, անկախ պատճառներից, չեն կարող ապօրինի վնաս հասցնել մեղադրյալի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին: **Պաշտպանության իրավունքն անդառնալիորեն կկործանվի, եթե դատական վարույթում օգտագործվեն ոստիկանների կողմից փաստաբանի բացակայությամբ հարցաքննության ժամանակ տրված մեղադրական ցուցմունքները**» (ընդգծումը՝ հեղ.) (ՄԻԵԴ վճիռը «Սալուզն ընդդեմ Թուրքիայի» գործով, կետ 50):

ՌԴ-ում պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքը, որից նա դատարանում հրաժարվել է, ճանաչվում է անթույլատրելի, այսինքն՝ այս իրավիճակի նկատմամբ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, կիրառվել է ապացույցի թույլատրելիության ինստիտուտը: Ռուս դատավարագետներն արդարացիորեն քննադատել են օրինական կարգով ստացված ցուցմունքն անթույլատրելիության ինստիտուտի հետ կապելու՝ ռուսական օրենսդրի մոտեցումն այն պարզ պատճառով, որ նկարագրված իրավիճակում մեղադրյալի ցուցմունքը չի կարող որակվել որպես անթույլատրելի ապացույց, քանի որ այն վերցնելիս օրենքի խախտում թույլ չի տրվել, մինչդեռ ապացույցն անթույլատրելի է ճանաչվում, եթե այն ձեռք է բերվել օրենքի խախտմամբ (Балакин 148, Белоковыльский 81, Кипнис 13, Новиков 41):

ՀՀ օրենսդիրը, ամենայն հավանականությամբ, նկատի ունենալով ռուս դատավարագետների քննադատությունները, ՀՀ քր. դատ. օր.-ում պաշտպանի բացակայությամբ մեղադրյալից ցուցմունք ստանալը, որից նա հետագայում հրաժարվում է, համարել է ոչ թե այդ ցուցմունքն անթույլատրելի ճանաչելու հիմք, այլ այն դասել է օրենքով սահմանված կարգով ստացված այն ապացույցների շարքին, որոնց օգտագործումն արգելվել է:

Պետք է նկատի ունենալ, որ պաշտպանի բացակայությամբ մեղադրյալին հարցաքննելը կարող է մի իրավիճակում լինել օրինական, մեկ այլ իրավիճակում՝ ապօրինի: Այսպես. եթե քննիչը մեղադրյալին հարցաքննելիս անհապաղ միջոցներ չի ձեռնարկել վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, երբ առկա է եղել պաշտպանի պարտադիր մասնակցության հիմք (ՀՀ քր. դատ. օր.-ի 46-րդ հոդվածի 2-րդ մաս), ապա այս իրավիճակում պաշտպանի բացակայությամբ ստացված ցուցմունքը պետք է համարել օրենքի Եական խախտմամբ ձեռք բերված տվյալ, և պետք է այն ճանաչել անթույլատրելի: Մինչդեռ, եթե մեղադրյալը նախաքննության ընթացքում օրինական կարգով հրաժարվել է պաշտպանից (ՀՀ քր. դատ. օր.-ի 47-րդ հոդված), ապա այս իրավիճակում պաշտպանի բացակայությամբ ստացված ցուցմունքն ինքնին ձեռք է բերվել օրինական ճանապարհով, պարզապես, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվում է այդ ցուցմունքից, ապա դրա օգտագործումն արգելվում է:

Տարածված է այն մոտեցումը, որ պաշտպանի բացակայությամբ տրված ցուցմունքի օգտագործումն սահմանափակելու նպատակն այն է, որ մեղադրանքը հիմնականում կամ առավելապես հիմնված չլինի մեղադրյալի ցուցմունքի վրա, և վարույթն իրականացնող մարմինն ինքը շահագրգռված լինի, որ մեղադրյալի հարցաքննությունը կատարվի պաշտպանի ներկայությամբ (Ղուկասյան, Հրայր և ուրշներ 168): Իրականում այս նորմի հիմքում ընկած է առավել խորքային գաղափար: Այս կարգավորման գաղափարախոսության հիմնադիր-դատավարագետները

ժամանակին նշել են. «Պաշտպանի բացակայությամբ տրված մեղադրյալի ցուցմունքն անթույլատրելի է, քանի որ կասկածի տակ է դրվում դրանց կամավորությունը, հետևապես՝ հիմք է տալիս համարելու, որ մեղադրյալն իր դեմ ցուցմունք է տվել հարկադրանքի ազդեցության տակ (Лугинская 6)»:

Եթե ասվածն ընդհանրացնենք, ապա կվերահաստատվի մեր այն պնդումը, որ Օրենսդիրն այս կարգավորման հիմքում դրել է մեղադրյալի ցուցմունքի ոչ հավաստիության կանխավարկածը. եթե մեղադրյալը դատարանում հրաժարվում է ցուցմունքից, որը միևնույնական վարույթում տվել է պաշտպանի բացակայությամբ, ապա ենթադրվում է, որ այդ ցուցմունքը հավաստի չէ:

Գործնականում տարածում են ստացել այն դեպքերը, երբ միևնույնական վարույթում մեղադրյալը պաշտպանի բացակայությամբ տալիս է խոստովանական ցուցմունք, սակայն մի քանի օր անց քննիչը կազմակերպում է երկրորդ «հարցաքննությունը», և մեղադրյալն արդեն պաշտպանի ներկայությամբ պնդում (վերահաստատում) է առաջին հարցաքննության ժամանակ տված ցուցմունքը: Հարց է ծագում քննիչի կազմակերպած երկրորդ «հարցաքննության» ժամանակ արդեն պաշտպանի ներկայությամբ առաջին ցուցմունքը վերահաստատելու փաստն արդյո՞ք դատարանի համար հիմք է՝ հերքելու պաշտպանի բացակայությամբ տրված՝ մեղադրյալի ցուցմունքի ոչ հավաստիության կանխավարկածը և օգտագործելու (հրապարակելու) այդ ցուցմունքը, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվում է ցուցմունքից:

ՀՀ դատարաններն այս հարցի վերաբերյալ, ընդհանուր առմամբ, պաշտպանում են դատախազության մոտեցումը, ըստ որի, եթե քննիչի կազմակերպած երկրորդ հարցաքննության ժամանակ մեղադրյալը պաշտպանի ներկայությամբ վերահաստատում է առաջին ցուցմունքը, ապա այս պարագայում առկա չէ միևնույնական վարույթում տրված առաջին ցուցմունքն օգտագործելու (դատարանում այն հրապարակելու) օրենսդրական որևէ խոչընդոտ (Դատական գործ N: ԵԴ1/2183/01/23): Այսպես՝ Դատավոր Ջ. Հայրապետյանը թիվ ԵԴ1/0442/01/23 գործով համարել է, որ նախաքննական ցուցմունքների հրապարակումը կրել է իրավաչափ բնույթ, քանի որ պաշտպանի ներկայությամբ մեղադրյալը, տեղեկացված լինելով լուրջության պահելու, իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի մասին, կատարել է գիտակցված ընտրություն և պնդել է որպես ձեռքակալված առանց պաշտպանի տված ցուցմունքի բովանդակությունը: Դատավորը 26.11.2024թ. դատավճռում նշել է. «(...) նախկինում տված ցուցմունքները կարող են հրապարակվել և դրվել դատավճռի հիմքում, եթե պահպանվել են հետևյալ պայմանները.

ա. մեղադրյալը պատշաճ տեղեկացվել է լուրջ իրավունքի մասին ու պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո նրա ներկայությամբ կատարել է գիտակցված ընտրություն և վերահաստատել է իր նախորդ ցուցմունքը:

բ. պաշտպանը գրկված չի եղել ՀՀ քր. դատ. օր.-ի 49-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիման վրա նախորդ ցուցմունքի բովանդակությանը ծանոթանալու հնարավորությունից:

Ընդ որում՝ որևէ իրավական նշանակություն չունի այն փաստը, թե մեղադրյալը պաշտպանի ներկայությամբ սահմանափակվել է նախորդ ցուցմունքը զուտ պնդելով, թե՞ որևէ այլ տեղեկություններ կամ արդեն իսկ հայտնաձեռնված տեղեկությունը կրկնելով» (Դատական գործ N: ԵԴ1/0442/01/23):

Քրեական վարույթի հանրային մասնակիցների և ՀՀ դատարանների կողմից ձևավորված այս պրակտիկան վիճելի է: Պաշտպանի բացակայությամբ տրված խոստովանական ցուցմունքը հետագայում պաշտպանի ներկայությամբ վերահաստատելու գործընթացը ոչ թե հարցաքննություն է, այլ «հարցաքննություն» և «ցուցմունք» եզրույթների ներքո քողարկված «նոտարական վավերացման» գործընթաց է, որը կազմակերպվում է ոչ թե քրեական վարույթի համար նշանակություն ունեցող լրացուցիչ տվյալներ ստանալու կամ տվյալները ստուգելու, այլ

Նախկինում տրված խոստովանական ցուցմունքը պաշտպանի ներկայությամբ մի քանի բառով վերահաստատելու նպատակով: Այս առումով, երկրորդ «հարցաքննությունը» ապացուցողական գործողությունն է, քանի որ դրա արդյունքում չի ակնկալվում ձեռք բերել նոր ապացույց, իսկ այդ գործողության արդյունքում կազմված արձանագրությունը ցուցմունք (ապացույց) է, քանի որ այն օժտված է ապացույցի վերաբերելիության հատկանիշով:

Հարցաքննության և ցուցմունքի հետ առնչությունն չունեցող այս գործընթացը ստեղծվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 6-րդ մասով և 330-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումները, ինչպես նաև՝ ցուցմունքի՝ դատական դեպրոնացման ինստիտուտը շրջանցելու նպատակով: Գործընթացի արդյունքների արժանահավատության ապահովման տեսանկյունից մի բան է, երբ անձը պաշտպանի *մասնակցությամբ* տալիս է խոստովանական ցուցմունք, մեկ այլ բան է, երբ անձը պաշտպանի *ներկայությամբ* մի քանի բառով և մի քանի ռոպեում պարզապես վերահաստատում է պաշտպանի բացակայությամբ իր տված խոստովանական ցուցմունքը: Ուստի՝ պաշտպանի բացակայությամբ տրված խոստովանական ցուցմունքը հետագայում պաշտպանի ներկայությամբ վերահաստատելու գործընթացը չի կարող հաղթահարել պաշտպանի բացակայությամբ տրված խոստովանական ցուցմունքի ոչ հավաստիության կանխավարկածը:

Վերը նշված գործով դատավոր Ջ. Հայրապետյանը չի արժևորել երկրորդ գործողության ժամանակ պաշտպանի կողմից խոստովանական ցուցմունքի բովանդակությանը փաստացի ծանոթանալու անհրաժեշտությունը: Դատավորը հիմք է ընդունել այն մոտեցումը, որ պաշտպանն ինքը պետք է պահանջեր մեղադրյալի՝ նախկինում տված խոստովանական ցուցմունքի (արձանագրության) պատճենը, և եթե պաշտպանը խոստովանական ցուցմունքի վերաբերյալ առարկություններ ունենար, ապա այդ մասին երկրորդ գործողության ժամանակ կբարձրաձայներ: Նման տրամաբանությունն, անկասկած, գոյության իրավունք ունի, սակայն, երբ խոսքը վերաբերում է արդարադատության երաշխիքների ապահովմանը, այն էլ՝ խոստովանական ցուցմունքի հարցում, ապա «պաշտպանի լռությունը հավասար է առարկության բացակայության» պարզ ենթադրությունը չպետք է գործի: Նման իրավիճակում արդարադատության երաշխիքների ապահովման պարտականությունը դրվում է քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վրա¹:

Եզրակացություն

Օրենսդիրը ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով իրավաբանորեն անհնարին է համարել օրենքով սահմանված կարգով ձեռք բերված համապատասխան ապացույցների օգտագործումը, քանի որ, ամենայն հավանականությամբ, հիմք է ընդունել այն ենթադրությունը, որ նկարագրված երեք իրավիճակներում ապացույցները հավաստի չեն (ապացույցի ոչ հավաստիության կանխավարկածը): Օրենսդիրը, ըստ էության, կասկածի տակ է դրել այս իրավիճակներում հայտնված ապացույցների հավաստիությունը:

¹ Վատի և վատագույնի երկընտրանքի միջև կարելի է նախապատվություն տալ հետևյալ պրակտիկային. երկրորդ «հարցաքննության» ժամանակ քննիչն արձանագրությունում մեջբերում է խոստովանական ցուցմունքի հակիրճ բովանդակությունը, կամ պաշտպանին իր նախաձեռնությամբ տրամադրում է խոստովանական ցուցմունքի (արձանագրության) պատճենը (այս ամենն արձանագրում է), որից հետո մեղադրյալը պաշտպանի ներկայությամբ հստակ դիրքորոշում է հայտնում խոստովանական ցուցմունքի վերաբերյալ: Նման պրակտիկայի ճանաչման դեպքում խոստովանական ցուցմունքների հարցում արդարադատության նվազագույն երաշխիքները կապահովվեն:

Նկատի ունենալով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում չի նշվում տեղեկության կրիչի տեսակի կամ բնույթի մասին, ուստի՝ այս հոդվածի տեքստային ձևակերպումը թույլ է տալիս այն կիրառել նաև այն դեպքերում, երբ տեղեկության կրողը մարդն է, օրինակ՝ մարդուն այլ մարդով փոխարինելու միջոցով նրա կրած տվյալները փոխարինելու կամ մարդու կրած տվյալների հատկանիշները փոփոխելու դեպքերում: Օրինակ՝ ողջամիտ կասկած կա, որ իրական վկայի փոխարեն ցուցմունք է տվել պաաստիկ վիրահատության միջոցով նրան էապես նմանեցված այլ անձ: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ բացակայում են ցուցմունքները փոխելու նպատակով մեղադրյալի կամ վկայի նկատմամբ հարկադրանք կիրառելու մասին փաստեր, սակայն իրավիճակն առաջացնում է ողջամիտ կասկած այն մասին, որ համապատասխան խոցելի իրավիճակում հայտնված անձի հաղորդած տվյալները փոփոխվել են, օրինակ՝ ձեռքակալված անձը, ում վրա առկա են վնասվածքներ, ցուցմունք է տվել պաշտպանի բացակայությամբ, և ցուցմունք տալուց անմիջապես հետո նրան ազատ են արձակել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղուկասյան, Հրայր և ուրիշներ. *ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց*. Եվրոպայի խորհուրդ, Երևան, 2022, 613 էջ:
2. Балакшин, Виктор. «К вопросу о понятии и содержании получения доказательств в уголовном процессе». *Правоведение*. №1 (312), 2014, стр. 146-161.
3. Белоковильский, Максим. «К вопросу о понятии допустимости доказательств в российском уголовном процессе». *Проблемы экономики и юридической практики*, № 3, 2008, стр. 81-84.
4. Кипнис, Михаил. «Допустимость доказательств по новому УПК // Возможности защиты в рамках нового УПК России». Материалы науч.-практ. конференции адвокатов, проведенной Адвокатской палатой г. Москвы при содействии Коллегии адвокатов «Львова и партнеры». *ЛексЭст*, 2003, стр.10-20.
5. Лупинская, Полина. «Доказательства и доказывание в новом уголовном процессе». *Российская юстиция*. № 7, 2002, стр.5-8.
6. Новиков, Сергей. «Показания обвиняемого в уголовном процессе России: проблемы допустимости». *Российская юстиция*. № 2, 2014, стр. 41-44.
7. ՀՀ Ազգային ժողով. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը». 30 հունիսի 2021թ.
8. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան. *Դատական գործ N: ԵՂ1/0442/01/23*. 15 Նոյ. 2023թ. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947656453:
9. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան. *Դատական գործ N: ԵՂ1/2183/01/23*. 16 Ապր. 2024թ. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947667002:
10. ՀՀ վճռաբեկ դատարան. *Դատական գործ N: ԼՂ2/0062/01/18*. 12 փետր. 2021թ. https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438255716:
11. Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Գանգատ թիվ 36391/02*. Ստրասբուրգ 27 նոյեմբերի 2008թ. Սալյուզն ընդդեմ Թուրքիայի գործով <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-89893>:

WORKS CITED

1. Ghukasyan, Hrayr ev urishner. *HH qreakan datavarut'yan nor o'rensgrqi hayecakargayin luc'umneri, norarakan motecumneri ev himnakan institutneri meknabanman gorc'nakan ughecuyc.* Evropayi xorhurd, Erevan. [A Practical Guide to Conceptual Solutions, Innovative Approaches and Interpretation of the Main Institutions of the New RA Criminal Procedure Code. Council of Europe, Yerevan]. 2022. (In Armenian)
2. Balakshin, Viktor. "K voprosu o ponjatii i sodержanii poluchenija dokazatel'stv v ugovnom processe". *Pravovedenie*. №1 (312), 2014, str. 146-161. ["To the Concept and Content of the Procedure of Taking Evidence in the Criminal Trial" *Pravovedenie*. №1 (312), pp.146-161] 2014. (In Russian)
3. Belokovyl'skij, Maksim. "K voprosu o ponjatii dopustimosti dokazatel'stv v rossijskom ugovnom processe". *Problemy jekonomiki i juridicheskoy praktiki*, № 3, 2008, str. 81-84. ["To the Concept of Admissibility of Evidence in Russian Criminal Proceedings". *Economic Problems and Legal Practice*, № 3, 2008, pp.81-84] 2008. (In Russian)
4. Kipnis, Mihail. "Dopustimost' dokazatel'stv po novomu UPK // Vozmozhnosti zashhity v ramkah novogo UPK Rossii". Materialy nauch.-prakt. konferencii advokatov, provedennoj Advokatskoj palatoj g. Moskvy pri sodejstvii Kollegii advokatov "L'vova i partnery". *LeksJest*, 2003, str. 10-20 ["Admissibility of Evidence under the New Criminal Procedural Code // Possibilities of the Defense under the New Russian Criminal Procedural Code". Materials of the scientific and practical conference of lawyers held by the Moscow City Bar Association with the assistance of the "Lvova and Partners" Bar Association. *LexEst*, pp.10-20] 2003. (In Russian)
5. Lupinskaja, Polina. "Dokazatel'stva i dokazyvanie v novom ugovnom processe". Rossijskaja justicija. № 7, 2002, str.5-8. ["Evidence and Proof in a New Criminal Trial" *Russian Justice*. № 7, pp. 5-8] 2002. (In Russian)
6. Novikov, Sergej. "Pokazaniya obvinjaemogo v ugovnom processe Rossii: problemy dopustimosti". Rossijskaja justicija. № 2, 2014, str. 41-44. ["Testimony of the Accused in Russian Criminal Proceedings: Problems of Admissibility". *Russian Justice*. № 2, pp. 41-44] 2014. (In Russian)
7. HH Azgayin jhoghov. "HH qreakan datavarut'yan o'rensgrq", 30 hunisi 2021t'. [National Assembly of the RA. "Criminal Procedure Code of the RA" 30 June 2021]. (In Armenian)
8. HH Erevan qaghaqi ar'ajin atyani y'ndhanur iravasut'yan qreakan dataran. Datakan gorc' N: ED1/0442/01/23. 15 Noy. 2023t' [First Instance Criminal Court of General Jurisdiction of Yerevan, RA. Court case N: ED1/0442/01/23, 15 Nov. 2023]. (In Armenian)
9. HH Erevan qaghaqi ar'ajin atyani y'ndhanur iravasut'yan qreakan dataran. Datakan gorc' N: ED1/2183/01/23. 16 Apr. 2024t' [First Instance Criminal Court of General Jurisdiction of Yerevan, RA. Court case N: ED1/2183/01/23, 16 Apr. 2024]. (In Armenian)
10. HH vtvr'abek dataran. Datakan gorc' N: LD2/0062/01/18. 12 p'etr. 2021t'[Court of Cassation of RA. Court case N: ED1/2183/01/23, 12 Feb. 2021]. (In Armenian)
11. Mardu iravunqeri evropakan dataran. Gangat t'iv 36391/02, Strasburg 27 noyember 2008t'. Salduzn y'nddem T'urqiayi gorc'ov [European Court of Human Rights, application no. 36391/02, Strasbourg, Salduz v. Turkey, 27 November 2008]. (In Armenian)

PROHIBITIONS ON THE USE OF EVIDENCE OBTAINED IN ACCORDANCE WITH THE PROCEDURE ESTABLISHED BY LAW

ARTUR GHAMBARYAN

*Russian-Armenian University, Department of Legal Theory and Constitutional Law, Head;
Academy of Public Administration
of the Republic of Armenia, Professor, Doctor of Law, Professor;
Honored Lawyer of the Republic of Armenia,
Yerevan, the Republic of Armenia*

The aim of this article is to analyze the specifics of the prohibition on the use of evidence obtained in accordance with the procedure established by law, as provided for in Article 97 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

To achieve this goal, the study sets the following objectives:

1. To examine the correlation between the prohibition on the use of legally obtained evidence and the concept of inadmissible evidence.
2. To analyze the provisions regulating cases in which evidence is prohibited from being used, particularly in the context of:
 - 2.1. reasonable doubts about the substitution or alteration of evidence;
 - 2.2. data obtained from a person with mental or physical health issues;
 - 2.3. a refusal in court to confirm testimony previously given in the absence of a defense attorney.

In conducting the research, the author applied general scientific methods, including the dialectical, synergetic, relevant, and logical methods, as well as analysis and synthesis, the formal-dogmatic methodology, and, to some extent, the comparative legal method.

The main conclusions of the study are as follows:

1. According to Article 97 of the CPC of the Republic of Armenia (Sections 5 and 6), the use of evidence obtained in accordance with the law is, in certain cases, considered legally impossible. This is likely due to the presumption of unreliability of such evidence in the three specified situations.
2. The wording of Article 97 allows for its application in cases where the information carrier is a person. In particular, this may include the substitution of one person with another as the bearer of the information or the alteration of the characteristics of the transmitted data.

Keywords: *evidence, inadmissibility of factual data, presumption of unreliability of evidence, prohibition on the use of evidence, the difference between inadmissibility and prohibition on use, peculiarities of admissibility and reliability of evidence, testimony given in the absence of defense counsel.*

ЗАПРЕТЫ НА ИСПОЛЬЗОВАНИЕ ДОКАЗАТЕЛЬСТВ, ПОЛУЧЕННЫХ В УСТАНОВЛЕННОМ ЗАКОНОМ ПОРЯДКЕ

АРТУР ГАМБАРЯН

*заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского университета,
профессор Академии государственного управления РА,
доктор юридических наук, профессор,
Заслуженный юрист РА,
г. Ереван, Республика Армения*

Цель настоящей статьи — проанализировать особенности запрета на использование доказательств, полученных в установленном законом порядке, предусмотренном статьей 97 Уголовно-процессуального кодекса Республики Армения.

Для достижения этой цели в рамках исследования ставятся следующие задачи:

1. рассмотреть соотношение запрета на использование доказательств, полученных в соответствии с законом, и института недопустимости доказательств;
2. исследовать содержание норм, регулирующих случаи запрета на использование доказательств, в частности, в контексте:
 - 2.1. разумных сомнений в замене доказательства или изменении его характеристик;
 - 2.2. получения данных от лица, имеющего психические или физические расстройства;
 - 2.3. отказа в суде от показаний, данных в отсутствие защитника.

В ходе исследования автор применял общенаучные методы: диалектический, синергетический, исторический и логический, а также методы анализа и синтеза, формально-догматическую методологию и частично - юридико-сравнительный метод.

Основные выводы исследования заключаются в следующем:

1. в соответствии со статьей 97 УПК РА (разделы 5 и 6) использование доказательств, полученных в установленном законом порядке, в ряде случаев признается юридически невозможным. Это обусловлено, вероятно, презумпцией их недостоверности в трех указанных ситуациях.
2. формулировка статьи 97 допускает ее применение и в случаях, когда носителем информации является человек. В частности, это может включать замену носителя информации другим лицом или изменение характеристик передаваемых данных.

Ключевые слова: *доказательство, недопустимость фактических данных, презумпция недостоверности доказательств, запрет на использование доказательств, различия между недопустимостью и запретом использования, особенности допустимости и достоверности доказательств, показания, данные в отсутствие защитника.*